



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

«*20*» դեկտեմբերի 2018 թվականի N: *322* ք.Գյումրի

ՀՄԱՅԱԿ ՀԱԿՈՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N:1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Հմայակ Հակոբյանի 2018 թվականի դեկտեմբերի 15-ի դիմումը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Սառնաղբյուրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հմայակ Հակոբյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 25 աշխատանքային օր՝ 2018 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2019 թվականի հունվարի 31-ը ներառյալ:
2. Հմայակ Հակոբյանի՝ արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Սառնաղբյուրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Սուսաննա Պողոսյանին:

Կ.ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Իսկականի հետ *6/20* է

